ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՎՈՒՇԻ ՄԱՐԶԻ
ԻՋԵՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆ

ՀՀ Տավուշի մարզի Իջևան համայնք,
ք.Իջևան, Երևանյան 6, Հեռ. (0263)42138,
ijevanmunicipality@gmail.com

«ՎԵԴԻ ՊԼԱՍՏ» ՍՊԸ –Ի
ՏՆՕՐԵՆ Ա. ՊՈՂՈՍՅԱՆԻՆ
ՀԱՍՑԵ՝ Ք. ՎԵԴԻ, ԿՈՄԻՏԱՍ 1

Ծանուցում

/Պահանջագիրը միակողմանի լուծելու մասին/

«Ենոքավանի համայնքապետարանի» և «Վեդի Պլաստ» ՍՊԸ-ի միջև 01.11.2021թ.-ին կնքված պետական գնման թիվ ՀՀ ՏՄԵՀ-ՀԲՄ-ԱՇՁԲ-21/03 ծածկագրով պայմանագրի շրջանակներում նախատեսվում էր իրականացնել ՀՀ Տավուշի մարզի Ենոքավան համայնքի խմելու նոր ջրագծի կառուցման աշխատանքներ:

Կնքված պայմանագրի 1.1. կետի համաձայն «Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի N1 հավելվածով սահմանված ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ՀՀ Տավուշի մարզի Ենոքավան համայնքի խմելու նոր ջրագծի կառուցման աշխատանքները», իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Պայմանագրի 1.3 կետի համաձայն պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է համաձայնագրի կնքման հաջորդ օրվանից՝ 27.11.2021թ. 180 օրացույցային օր՝ 27.05.2022թ.:

Պայմանագրի 3.1.կետի համաձայն պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն

պատճառված վնասները, եթե կապալառուն խախտել է 1.3. կետում նախատեսված ժամկետը /ներառյալ օրացույցային գրաֆիկը /:

ՀՀ Քաղաքացիական օրենսգրքի 347-րդ հոդվածի համաձայն պարտավորությունները պետք է կատարվեն պատշաճ՝ պարտավորության պայմաններին, օրենքին և այլ իրավական ակտերի պահանջներին համապատասխան, նույն օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ /կետանցով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ/ կատարելը:

Ելնելով վերոգրյալից՝ տեղեկացնում ենք, որ Գնումների մասին գործող օրենսդրությանը համապատասխան կողմերիս միջև 01.11.2021թ.-ին կնքված ՀՀ ՏՄԵՀ-ՀԲՄ-ԱՇՁԲ-21/03 ծածկագրով պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ժամկետն ավարտվել է 27.05.2022թ-ին, սակայն աշխատանքներն ամբողջությամբ չեն կատարվել, մնացել են անավարտ: Ուստի Ենոքավան համայնքի իրավահաջորդ Իջևանի համայնքապետարանի կողմից պայմանագիրը միակողմանի լուծվում է:

Պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կկիրառվի ՀՀ Կառավարության 04.05.2017թ.-ի թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգի 33-րդ 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Ընկերության կողմից որպես պայմանագրային պարտավորությունների պատշաճ կատարման ապահովում ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները կից վճարման պահանջագրերի հետ սահմանված կարգով կներկայացվեն ընկերությանը սպասարկող բանկ տուժանքի մասին համաձայնագրերով սահմանված գումարը 3.708.506 ՀՀ դրամ / երեք միլիոն յոթ հարյուր ութ հազար հինգ հարյուր վեց/ Իջևան համայնքի Ֆինանսների նախարարության գործառնական վարչություն 900375121150 հաշվեհամարին փոխանցելու նպատակով:

Ընկերության տվյալները «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի համաձայն գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով օրենքով սահմանված կարգով կներկայացվեն լիազոր պետական մարմին:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՃԱՂԱՐՅԱՆ

Կատ.՝ Ս. Սիրադեղյան
Հեռ. 093-987-395